

5835



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«29» 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N° 070 - 24

Նախաձեռնող՝

«ԲԻՆԱՄ» ՓԲԸ

ք. Երևան, Արշակունյաց պողոտա 56/2 շենք

Գործունեությունը՝

Պահեստային շինությունների, արհեստանոցի և
գրասենյակային մասնաշենքի կառուցում

ք.Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Թամանցիների փողոց 81/6

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 070 - 24

«29» Տեպտեմբեր 2024թ.

Պահեստային շինությունների, արհեստանոցի և գրասենյակային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԲԻՆԱՄ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաք, Թամանցիների փողոց 81/6

Ներածական մաս. «ԲԻՆԱՄ» ՓԲԸ-ն նախատեսում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Թամանցիների փողոց 81/6 հասցում կառուցել պահեստային շինություններ, արհեստանոց և գրասենյակային մասնաշենք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 23032021-01-0311/ծածկագիրը՝ 01-011-0394-0085/, ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N01/18-07/1-Մ-2593-343, տրված՝ 02.05.2022թ.:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասը, ինժեներաերկրաբանական տեսակետից, բարենպաստ է կառուցապատման համար: Ընդհանուր մակերեսը կազմում է 1.945536 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվում է կառուցել պահեստային շինություններ, արհեստանոց և գրասենյակային մասնաշենք: «Բինամ» ընկերությունը հանդիսանում է գերմանական Robert Bosch GmbH ընկերության պահեստամասերի պաշտոնական մատակարարը Հայաստանում և կառուցվող շենքերը ծառայելու են ընկերության կարիքների համար: Բուն տարածքում բուսահողը բացակայում է, քանի որ տարածքը գտնվում է քաղաքի հարավային արդյունաբերական գոտում, որտեղ բնակելի շենքեր, մանկական կամ ուսումնական հաստատություններ առկա չեն: Ըստ հայտի՝ նախնական ուսումնասիրությունների և գրականության տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել: Տեղամասում մինչև 13 մետր խորության վրա ստորերկրյա ջրեր առկա չեն: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ կարստ, սողանք, քարաթափություն, փլուզում և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:



Կառուցվելու են տիպային պահեստներ (N1-7), արհեստանոց, պահակակետ և գրասենյակային մասնաշենք: Բոլոր շինություններն ապահովված են լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով: Տանիքները սենդվիչ պանելներով են լինելու, որոնց ջերմամեկուսիչ շերտը նախատեսվում է հանքային բամբակով՝ հրդեհանավտանգության մակարդակի բարձրացման համար: Գրասենյակային մասնաշենքն իրենից ներկայացնում է երկաթ-բետոնե շրջանակակապային սխեմայով 4 հարկանի շինություն, որը կունենա 360 մ² մակերեսով նկուղային հարկ: Գրասենյակային մասնաշենքը բոլոր հարկերից կունենա ապակենտրոնացված տարհանման ելքեր:

Արհեստանոցը նախատեսված է երկաթ-բետոնե հիմնակմախքով, մետաղական տանիքով, մի մասի անտրեստով և 1 լիարժեք հարկով կառույց, որի արտաքին պատերը նախատեսվում է երեսպատել բետոնե բլոկներով: Առաջին հարկի մակերեսը 872 մ² է, անտրեստը՝ 364 մ²: Տիպային N1, N2, N3 և N4 պահեստների հիմնական մասը նախատեսվում է կառուցել երկաթ-բետոնե հիմնակմախքով, մետաղական տանիքներով, արտաքին պատերը երեսպատվելու են բետոնե բլոկներով: Բոլոր ճակատները խոլ են՝ առանց բացվածքների, բացառությամբ դիմացի ճակատից: Պահեստային շինությունների մակերեսները տարբեր են՝ 1086 մ², 996 մ²: Տիպային պահեստներից՝ N5-ը, N6-ը և N7-ը, ունենալու են մետաղական հիմնակմախք և մետաղական տանիք: Մակերեսները համապատասխանաբար՝ 1296 մ², 500 մ², 527 մ²: Պահեստային շինությունների ընդհանուր քանակը լինելու է 12: Պահակակետը միահարկ երկաթ-բետոնե կարկասով, երկթեք տանիքով 19 մ², արտաքին մակերեսով կառույց է:

Նախատեսվող շինությունների կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- Հողի ընդհանուր մակերես՝ 1.9455 հա:
- Շենքերի կառուցապատման մակերես՝ 13250.80 մ²:
- Կանաչապատման մակերես՝ 1030.86 մ²:
- Անջրանցիկ մակերես՝ 5156.7 մ²:
- Ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 360 մ²:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական արտադրական ձեռնարկություններից:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ, նախատեսվում է վերելակ գրասենյակային մասնաշենքերում:

Նախագծում հաշվի են առնված ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումներն՝ ըստ ՀՀ շինարարական նորմերի:

Նախատեսվող շինությունները հագեցած են լինելու էներգաարդյունավետության և էներգախնայման համակարգերով: Տեղադրվելու են բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ, կիրառվելու են ջերմամեկուսիչ խողովակաշարեր և օդատարներ, բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչներ:

Ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացվել է «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի և ՀՀ-ում գործող շինարարական նորմերի, որում հաշվի են առվել նաև հրդեհանավտանգության պայմանների համար նախատեսված ջրօգտագործումը:



Շինարարության ընթացքում իրականացվելու են հիմքերի փորման աշխատանքներ: Երկաթ-բետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու են մոտ 34702.09 մ³ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող գրունտից 15781.87 մ³ կօգտագործվի որպես հետլիցք, իսկ մնացած մասը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր՝ համապատասխան համաձայնեցում ստանալուց հետո: Կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողը ձեռք կբերվի ՀՀ գործող օրենսդրության պահանջների համապատասխան: Բնառեսուրսներից օգտագործվելու է նաև ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Հիմնական թափոնատեսակները, որոնք կառաջանան շինարարական աշխատանքների ընթացքում, 4-րդ և 5-րդ դասի են լինելու և իրենցից ներկայացնում են շինարարության խառը թափոններ՝ 6868.65 մ³ ծավալով, ոչ պիտանի հողային հանույթ և ավազային շլամ՝ 18920.22 մ³, կենցաղային չտեսակավորված աղբ՝ 6 տոննա: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է բոլոր փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիթորինգի իրականացում՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

Պարճառարական մաս. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն՝ տնկվելու են նոր ծառեր՝ 22 գնդաձև թույա, 4 հացենի, կանաչապատման մնացած հատվածներում նախատեսվում է իրականացնել սիզամարգի ցանքս: Կանաչապատման ընդհանուր մակերեսը կազմում է 1030.86 մ²:

Շինարարության կազմակերպման և իրագործման աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO_x) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականություն չափահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:



Եզրափակիչ մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ «ԲԻՆԱՄ» ՓԲԸ-ի կողմից նախատեսված պահեստային շինությունների, արհեստանոցի և գրասենյակային մասնաշենքի կառուցման հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվել են Շենգավիթ վարչական շրջանում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության:
2. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջները:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:
4. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված նախագծին համապատասխան:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչության հետ համաձայնեցված:



6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԲԻՆԱՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Շենգավիթ վարչական շրջանի Թամանցիների փողոց 81/6 հասցեում պահեստային շինություններ, արհեստանոց և գրասենյակային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ



Սուսաննա Անտոնյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան